

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԵՎ ԻՆՏԵՆՍԻՖԻԿԱՑՄԱՆ
ԱՆՉՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՅԵՐՈՒՄ**

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուների ուսուցման մասնագիտացման և ինտենսիֆիկացման անհրաժեշտության և դրա հետ կապված օտար լեզուների դասավանդման կառուցվածքի փոփոխությունների անհրաժեշտության գաղափարն ընդհանրապես արծարծվել է բազմաթիվ դասախոսների կողմից. կազմակերպվել են նաև գիտաժողովներ՝ նվիրված հարցի քննարկմանը:¹

Լրիվ կիսելով իմ գործընկերների մտահոգությունը, որը պայմանավորված է մեր հասարակության քաղաքական, տնտեսական, հասարակական, կրթական, մշակութային և այլ ոլորտներում տեղի ունեցող մեծածավալ փոփոխություններով, անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն կանգ առնել մի քանի հարցերի և խնդիրների վրա, որոնք կապված են ինչպես օտար լեզուների մասնագիտացված դասավանդման, այնպես էլ տարբեր ոլորտներում ապագա մասնագետներ ապահովելու խնդրի հետ:

Նախ և առաջ անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ երկար ժամանակ անորոշ է եղել անգամ օտար լեզուների դասավանդման նպատակը ոչ լեզվական բուհերում, թեև օտար լեզուների ուսուցման ծրագիրը ենթադրում է օտար լեզուների դասավանդում բանավոր և գրավոր խոսքի գործառույթների շրջանակում, այսինքն՝ ապագա մասնագետը պետք է կարողանա ոչ միայն կարդալ, խոսել, այլև գրել ուսուցանվող լեզվով: Մինչդեռ պարզվում է, որ դա իրականում բացարձակապես անհնար է միջնակարգ դպրոցում բավարար

¹ «Օտար լեզուները հատուկ նպատակների համար», գիտամեթոդական կոնֆերանս՝ նվիրված ԵՊՀ-ի 80-ամյակին, 1999թ.:

չափով պատրաստված չլինելու, մեծ մասամբ նաև՝ օտար լեզուներին հատկացված քիչ ժամաքանակի պատճառով:

Երկրորդ՝ բուհերում օտար լեզուների դասավանդման փորձը համարյա հաշվի չէր առնում լեզվի գործառական ոճի յուրահատկությունները, որն անհրաժեշտ է հետագա աշխատանքի ընթացքում: Գիտական և տեխնիկական գրականության գործառական ոճը մարդկության զարգացման արդի դարաշրջանի լեզվաբանական ամենաբնութագրիչ ցուցանիշն է² և բնորոշվում է նախ և առաջ իր ուղղվածությամբ դեպի ինտելեկտը, որը գործառում է հասկացություններով, դատողություններով, բանաձևերով, տերմիններով կապված իրականության ամփջական օրինաչափությունների հետ՝ միասնական բոլոր ժողովուրդների համար: Ընդ որում, յուրաքանչյուր գիտակարգում կազմվում է սեփական գանձարան /թեզաուրուս/³ ներառելով նաև ընդհանուր գիտական և անգամ համազգային բառապաշարի որոշ շերտեր: Այդ գիտակարգերի շարահյուսությանը հիմնականում հատուկ է մինևույն ենթակա-ստորոգյալ կառույցը, որն ունի խիստ արտահայտված թեմա-ռեմատիկ բնույթ: Գիտության և տեխնիկայի լեզուն միջազգային է՝ զուրկ այս կամ այն լեզվին բնորոշ անհատական յուրահատկություններից: Կարելի է ասել, որ այս գործառույթը կատարող տարբեր լեզուները դառնում են լեզվաբանորեն «պարզեցված» և իմաստաբանորեն «մոտեցված»: Դա թույլ է տալիս ուսումնական գործընթացը դարձնել խիստ մասնագիտացված և ինտենսիվ, գործնական պարապմունքները նվիրել ուսումնասիրվող լեզուներով մասնագիտական տեքստերի ուսուցմանը և քննարկմանը, ինչպես նաև տերմինների, տերմինային բառերի և արտահայտությունների յուրացմանը թե՛ օտար և թե՛ մայրենի լեզուներում:

Հարկ է նշել նաև, որ գիտական և տեխնիկական գրականության գործառական ոճի կիրառության ոլորտը ընդլայնվում է գիտա-տեխնիկական

² Sbiu Пумпянский А.Л. Функциональный стиль научной и технической литературы как средство массовой информации современного общества. В сб. Проблемы семиотики, М., Изд. МГУ, 1979:

³ Գիտելիքի այս կամ այն բնագավառին վերաբերող տվյալների համակարգված ամբողջություն, որ տրվում է ըստ որևէ իմաստային բնութագրի միմյանց հետ առնչակցվող հիմնաբառերի /դեսկրիպտների/ ձևով:

առաջընթացի արագացմանը համընթաց: Այդ գործընթացը տեղի է ունենում մեր աչքի առաջ. մենք հստակ զգում ենք վերջինիս դինամիկան և գիտակցում նրա հասարակական և մասնագիտական կարևորությունը: Բնութագրական է և այն, որ այդ գործընթացը ունի համապարփակ բնույթ. և տնտեսապես ու տեխնիկապես բարձր զարգացած յուրաքանչյուր երկրի լեզվի լեզվական համակարգի նկարագրությունն այսօր արդեն անհնար է առանց գիտական և տեխնիկական գրականության և հասարակության մշակութային կյանքում դրա դերի կարևորման: Մյուս կողմից՝ նկատվում է միջին օղակի գիտնականների, ինժեներների, ասպիրանտների, ուսանողների և մասնագետների /տեխնիկների, որակյալ մասնագետների/ կարճ ժամանակահատվածում օտար լեզուներով գիտական և տեխնիկական գրականության գործառական ոճի յուրացման հարաճուն ծագում: Ավելին՝ արդի պայմաններում օտար երկրների հետ Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային կապերը հետևողականորեն պահանջում են զինել մեր շրջանավարտներին օտար լեզվի կայուն և նպատակամետ գիտելիքներով իրենց ապագա մասնագիտական գործունեության շրջանակներում:

Անհրաժեշտ է նշել և այն փաստը, որ գիտատեխնիկական գրականությունը և թրթավարությունը ռուսերենում նշանակալի չափով ներկայացված են, իսկ հայերենում եղած թարգմանությունները ոչ միշտ են համարժեք, ընդ որում, գրականության թարգմանությունը ռուսերենից հայերեն կամ անգլերենից /գերմաներենից/ հայերեն մի երկար գործընթաց է, որի արդյունքում հայտնվում են արդեն հնացած ինֆորմացիայով գրականություն: Ավելին՝ եթե որևէ ձեռնարկությունում անհրաժեշտություն է զգացվում գիտատեխնիկական նյութերի կամ փաստաթղթերի թարգմանության, ապա, որպես կանոն, դիմում են կամ բուհերի համապատասխան ամբիոններ, կամ դպրոցների օտար լեզուների ուսուցիչների, կամ թարգմանությունների գրասենյակ, երբեմն նույնիսկ՝ նոտարական գրասենյակների և համապատասխան լեզուներին տիրապետող մասնավոր անձանց, որոնք տվյալ տեխնիկական ճյուղի մասնագետներ չեն: Նման թարգմանությունները հաճախ լի են կոպիտ սխալներով և աղճատում են տեղեկատվության իմաստը: Հարկ է

նշել նաև այն փաստը, որ նման թարգմանությունների վրա ծախսվում է նշանակալի գումար՝ այն դարձնելով անարդյունավետ սպառում:

Ենթադրում են, որ ասվածը լրիվ բավական է, որպեսզի հիմնավորվի ոչ լեզվական բուհերում օտար լեզուների դասավանդման համակարգի անհապաղ վերանայման անհրաժեշտությունը մեր հանրապետությունում: Անհրաժեշտ է, որ բուհն ավարտած երիտասարդ մասնագետը կարողանա բառարանի օգնությամբ, հենվելով բուհում օտար լեզու սովորելու ընթացքում ձեռք բերած որոշակի հմտությունների ու կարողությունների վրա, թարգմանել գիտատեխնիկական տեքստերը և փաստաթղթերը իր մասնագիտության շրջանակներում օտար լեզվից մայրենի և հակառակը: Փորձը ցույց է տալիս, որ դա տեղի է ունենում շատ հազվադեպ: Նշանակալի է նաև այն հանգամանքը, որ գիտատեխնիկական մտքի ճիշտ վերարտադրությունը պայմանավորված է լեզվական տերմինաբանության ճիշտ ըմբռնմամբ: Ի տարբերություն այլ բառույթների՝ տերմինը հանդիսանում է հսկայական ինֆորմացիայի կրող, որի լեզվական միջավայրը սխալ որոշակելու դեպքում տեղիք է տալիս թյուրըմբռնման: Բազմիցս ապացուցվել է, որ որքան մեծ է մասնագետի գիտելիքի պաշարը, այնքան կոպիտ են նրա սխալները թարգմանության ժամանակ, եթե նա վատ է տիրապետում լեզվին, և բնօրինակի բովանդակության մասին կարելի է պատկերացում կազմել միայն ըստ նրան հայտնի տերմինների նշանակության:⁴

Բուհերում օտար լեզուների դասավանդման ներկա փորձը ակնհայտորեն հակասում է երիտասարդ մասնագետներին առաջադրվող ժամանակակից պահանջներին: Նույնիսկ այն ուսանողները, որոնք հաջողությամբ ավարտում են օտար լեզվի դասընթացը բուհում, միայն հազվադրու դեպքերում են կարողանում կիրառել լեզվական գիտելիքները իրենց մասնագիտական բնագավառում: Այստեղ ակնհայտ է անհամապատասխանությունը բուհում ուսուցանվող օտար լեզվի և երիտասարդ մասնագետին իր մասնագիտությանն առնչվող առօրյա

⁴ St'u Пумпянский А.Л. Предисловие к работе "Пособие по переводу научной и технической литературы с русского языка на иностранные," М., 1971:

գործունեության ընթացքում անհրաժեշտ գործառական ոճերի միջև: Նման դեպքերում պարզ է դառնում, որ ոչ լեզվական մասնագիտական բուհերի ուսանողներին անհրաժեշտ է սովորեցնել ոչ թե օտար լեզու ընդհանրապես, այլ նախ և առաջ դրա այն մասը կամ հատվածը, որը պահանջվում է նրանցից մասնագիտության հետ կապված պրակտիկ գործունեության ընթացքում: Նման պարագայում օտար լեզուները հանդես են գալիս իբրև ապագա մասնագետի կայացման կարևոր նախապայման, քանի որ առաջ է քաշվում որոշակի նպատակ՝ ուսանողներին պատրաստել այնպես, որ նրանք կարողանան հասկանալ և թարգմանել գիտատեխնիկական գրականությունն ու փաստագրությունը և արտասահմանցի գործընկերների հետ զրույց վարել մասնագիտությանն առնչվող թեմայի շուրջ:

Դժվար չէ նկատել, որ օտար լեզվի դասավանդման խնդիրների ու նպատակների մասն ըմբռնման դեպքում ինքը՝ սովորողը, հստակորեն գիտակցում է, որ ուսուցանվող օտար լեզուն դառնում է իր ապագա մասնագիտության անքակտելի մասը: Հետևաբար ժամանակակից կրթության կենսական պահանջը օտար լեզվի նշանակությունը մինչև ուսուցանվող մասնագիտության մակարդակին հասցնելու անհրաժեշտությունն է: Բնական է, որ այն պահանջում է բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուների դասավանդման ուղղվածության փոփոխություն: Նման մոտեցումը ապահովում է դասավանդման փորձի տարբերակված խնդիրների, ուսուցողական նյութի և մեթոդիկայի ավելի ռեալ և գիտականորեն հիմնավորված քննարկում և հաստատում՝ դրանց ինտենսիվացման ուղղությամբ: Հարկ է նշել, որ ավելի ու ավելի լայն ծավալում են ստանում օտարալեզու տեքստերը, որոնք բովանդակությամբ համընկնում են մայրենի լեզվի մասնագիտական նյութի հետ: Մեզ մոտ և արտասահմանում կատարվող լեզվաբանական և մեթոդաբանական աշխատանքներում ուսումնասիրվում է և այն հարցը, թե որքանով են մասնագիտական և այլ միջանկյալ գիտելիքներ

ու ընդունակությունները նպաստում սովորողների օտար լեզուների ուսուցմանն ու տիրապետմանը:⁵

Հայաստանի ոչ լեզվական մասնագիտական բուհերի օտար լեզուներ դասավանդողները հսկայական և լուրջ աշխատանք ունեն կատարելու՝ օտար լեզուների ուսուցումը համապատասխանեցնել այն պահանջներին, որոնք ապագա մասնագետների առջև են դնում հասարակական ժամանակակից հարաբերությունները կենսագործունեության բազմազան ոլորտներում: Այն պայմանավորված է հասարակության, գիտության առաջընթացի որակապես նոր պահանջներով, և, ամենակարևորը, այն հանգամանքով, որ այսօր Հայաստանն ինքնուրույն պետք է լուծի իր խնդիրները, ինչը բոլորովին այլ էր 10-15 տարի առաջ: Ժամանակակից աշխարհում այս խնդիրների լուծումը հնարավոր է դառնում միայն գիտական տեղեկատվության և նրա նվաճումների ինտենսիվ փոխանակման պայմաններում, որոնք, ի վերջո, հիմնվում են գիտատեխնիկական գրականությունը և փաստագրությունը հասկանալու և թարգմանելու հիմնադրույթներին տիրապետելու վրա: Անհրաժեշտ է նաև գիտական և տեխնիկական գրականության գործառական ոճի երկլեզվային հետազոտություն առանձին վերցրած զույգ լեզուների համար, որը հնարավորություն կտա վեր հանել զույգ լեզուների գիտական և տեխնիկական մտքի արտահայտման նմանություններն ու տարբերությունները և ուղեցույց կհանդիսանա օտար լեզվով գիտական և տեխնիկական գրականությունը հայերեն թարգմանելու համար:

Այսպիսով, ոչ լեզվական մասնագիտական ֆակուլտետներում օտար լեզուների դասավանդման մասնագիտացումը և ինտենսիվացումը պետք է կատարվի երկու ուղղությամբ. 1. ուսուցանվող լեզուներով գիտական և տեխնիկական գրականության գործառական ոճի երկլեզվյա խորացված ուսումնասիրության միջոցով վեր հանել զույգ լեզուներում տեխնիկական և գիտական մտքի որոշակի օրինաչափությունները, նմանությունները և տարբերությունները՝ անգլերեն/հայերեն, գերմաներեն/հայերեն /և հակառակ/

⁵ Sh'u Teachers as Course Developers, Edited by Kathleen Gravers, CUP, 1996; D. Nunan, C. Lamb. The Self-directed Teacher. CUP, 1996:

և ստեղծել դրա հիման վրա մասնագիտացված դասագրքեր որոշակի մասնագիտությունների համար՝ արդեն մայրենի լեզվի բազայի հիման վրա: Դրան զուգահեռ՝ անհրաժեշտ է մեթոդաբանություն մշակել օտար լեզուների դասավանդման համար՝ ուղղված գիտա-տեխնիկական գրականության և փաստագրության գործառական ոճի յուրացմանը, 2. համապատասխան փոփոխություններ մտցնել ոչ լեզվական մասնագիտական ֆակուլտետների օտար լեզուների դասընթացի բուն կառուցվածքի և նպատակի մեջ: Առաջադրված խնդիրների լուծման նպաստավոր պայմաններ կարող են լինել հետևյալները. ա/ ընդունելության քննություն /ստուգարք/ օտար լեզվից բուհերի մի շարք բնագիտական ֆակուլտետներում /դա կխթանի միջնակարգ դպրոցների շրջանավարտների օտար լեզվի իմացության մակարդակը, բ/ դասավանդման ընթացքում հիմնական ուշադրությունը դարձնել գիտա-տեխնիկական գրականության և փաստագրության մայրենի լեզվով թարգմանելու ունակությունների զարգացման վրա, որոնք բովանդակությամբ համապատասխանում են ուսումնասիրվող մասնագիտության նյութին, գ/ կուրսային և դիպլոմային աշխատանքներ /նախագծեր/ գրելու ժամանակ օգտագործել գիտական ինֆորմացիա՝ վերցված անմիջապես արտասահմանյան պարբերականներից և այլ մասնագիտական գրականությունից, դ/ կարողանալ դիպլոմային աշխատանքի /նախագծի/ համար կազմել արդյունք-սեղմագիր ուսուցանվող լեզվով, ինչպես նաև կարողանալ քննարկել այդ լեզվով տվյալ մասնագիտության նյութերը և զրույց վարել արտասահմանցի մասնագետների հետ, ե/ մտցնել պետական քննություն օտար լեզվից:

Այս խնդրի հաջող իրագործումը օտար լեզուներ դասավանդողների կողմից նշանակալի ներդրում կլինի ոչ միայն մեր երկրի տնտեսության հետագա նվաճման, այլև՝ այլ երկրների զարգացած տնտեսությամբ ինտեգրման գործընթացում: